ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/0948/02/25 ք. Երևան
13 Փետրվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով Կարեն Արտաշեսի Մանուկյան ԱՁ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

Կարեն Արտաշեսի Մանուկյան ԱՁ-ի ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման թիվ ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. հունվարի 24-ի թիվ 1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով դատավորի աշխատակազմին հասանելի է դարձել 10.02.2025թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ից պետք է պահանջել «ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման թիվ ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. հունվարի 24-ի թիվ 1 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.Կարեն Արտաշեսի Մանուկյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման թիվ ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. հունվարի 24-ի թիվ 1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ից պահանջել դատարան ներկայացնել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման թիվ ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. հունվարի 24-ի թիվ 1 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող Հայաստանի Հանրապետության Ծիրակի մարզի Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի մարտի 18-ին:
5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by NAIRA AVETISYAN

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am